

## ԿԱՐԾԻՔ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԴՐՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ  
ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կրթության միջազգայնացման հիմնահարցը ՀՀ անկախության տարիներից ի վեր ուշադրության դիտարկերտում է պահում օտարերկրյա ուսանողների Հայաստանում կրթություն ստանալու հիմնահարցերը, որոնք իրենց հետ բերում են լեզվի և մշակույթի առանցքային դերերի կարևորում, դրանց միջնորդությամբ նաև օտարերկրյա սովորողին երկիր սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրում: Միննույն ժամանակ աշխարհի տարբեր մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու հնարավորություն ունենալով՝ անձի ուսումնառության վերջնարդյունքի որակը ստուգող որոշիչ գործոն է համարվում տվյալ սոցիալ-մշակութային միջավայրում նրա ներառված լինելու չափը: Այս տեսանկյունից դիտարկելով Հայաստանը որպես օտարերկրացի ուսանողների ուսումնառության սոցիալ-մշակութային միջավայր և վերլուծելով օտարերկրացի ուսանողների ինտեգրման գործընթացի առանձնահատկությունները հայոց լեզվի և մշակույթի յուրացմամբ, կարելի է դուրս բերել բազմաթիվ խնդիրներ, ուսումնառության ակտիվությունը խթանող կամ խոչընդոտող պայմաններ, դասավանդման առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրմանն էլ վերաբերում է ատենախոսությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 12 աղյուսակից, 4 գծապատկերից, օգտագործած գրականության ցանկից, ծավալուն հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության գիտատեսական դրույթները:

Արդիականությունը բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ «Լեզվի մասին» օրենքի պահանջների կատարման անհրաժեշտությունը և հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման հիմնախնդիրը ամբողջական վերլուծելու համար կարիք կա ուսումնասիրել օտարերկրյա սովորողների ուսումնառությանը խթանող, ինչպես նաև խոչընդոտող լեզվամշակութային պայմանները և դրանց հաղթահարման ուղիները: Հայաստանում օտարերկրյա սովորողի սոցիալ-մշակութային ինտեգրումը բարելավող քայլերին ուղղված ուսումնասիրության սակավությամբ, հիմախնդրի նորովի ուսումնասիրության անհրաժեշտությամբ է ատենախոսը հիմնավորել թեմայի արդիականությունը:

Իբրև հետազոտության նպատակ՝ ատենախոսը սահմանել է հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների մեր երկրի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու առանձնահատկությունների բացահայտումը, միջմշակութային և հաղորդակցական հմտությունների զարգացմանը խոչընդոտող պատճառների ուսումնասիրումը և հնարավոր լուծումների առաջադրումը:

Հետազոտության խնդիրները բազմակողմանի են անդրադառնում նպատակից բխող քայլերին, որոնք են՝ հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական անհրաժեշտ գրականության ուսումնասիրումը, հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջավայրային առանձնահատկությունների բացահայտումը, սոցիոլոգիական հարցումների միջոցով ՀՀ-ում սովորող օտարերկրացի ուսանողների շրջանում հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման մարտահրավերներն ու Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու վերաբերյալ նրանց ընկալումները բացահայտելու և լեզվի միջնորդությամբ սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու դինամիկ մոդելի ստեղծումը:

Հստակ է շարադրված նաև ատենախոսության նորույթը, որն ուղղված է հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով օտարերկրյա սովորողին երկրի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրող մոդելի մշակմանը:

Պաշտպանության են ներկայացված վեց դրույթներ, որոնք ցույց են տալիս ատենախոսի հետազոտական աշխատանքի ուղղությունները: Տեսական և գործնական նշանակության վերլուծության մեջ երևում են ծավալուն աշխատանքի տեսագործնական հիմնավորումները և կիրառական նշանակությունը:

Հետազոտության առաջին գլուխը, որի վերնագիրն է «Լեզուն և մշակույթը որպես սոցիալ-մշակութային միջավայրի ինտեգրման միջոց» բաղկացած է երեք ենթագլխից: Դրանցում քննվում են ուսուցման/ուսումնառության սոցիալ-մշակութային տեսությունները և դրանց կիրառումը օտար լեզվի ուսուցման գործընթացում, լեզվի և մշակույթի կապը երկրորդ կամ օտար լեզվի յուրացման գործընթացում, սոցիալ-մշակութային գործոններն ու սոցիալ-մշակութային համատեքստը օտար լեզվի ուսուցման գործընթացում: Այս գլխում ատենախոսը հատուկ անդրադարձել է Լ.Վիգոտսկու «անձի զարգացման մերձակա գոտու» հայեցակարգին՝ քննելով սովորողի իրական և հնարավոր զարգացման միջակայքի հարցեր: Ատենախոսը եզրակացնում է, որ «դասավանդումը և ուսումնառությունը ԱԶՄԳ-ում որոշակիորեն կախված են սոցիալական փոխգործակցությունից և կրթական միջավայրում այն խոսքով միջնորդավորված դեմ առ դեմ փոխգործակցություն է»: Աշխատանքում ներկայացված է անձի զարգացման մերձավոր գոտում ընթացող կարգավորման քառափուլ մոդելը և հանգամանակից վերլուծված է այն /էջ 13/: Ատենախոսը նկատում է, որ շատերն են անդրադարձել լեզվի ուսուցման գործում մշակույթի ինտեգրման մասին, որոնց թվում՝ Ս.Տեր -Մինասովան, Մ. Հուբեր-Կրիզլերը, Ի.Լազարը, Ա. Հոլդերը և այլն: Ատենախոսը հանգամանորեն վերլուծել է Քրամշի տեսությունը, նկատելով, որ օտար լեզվի գիտելիքների կիրառականությունը որոշվում է ոչ թե քերական միջոցներով, այլև հաղորդակցման ակտիվացման օգնությամբ: Անդրադառնալով միջմշակութային կոմպետենցիաների զարգացման խնդրին, ատենախոսը բացահայտում է, որ դրանց զարգացումը ենթադրում է նախ միջմշակութային տարբերությունները ընկալելու և ճանաչելու կարողություն, մշակութային տարբերությունը ընդունելու կարողություն, մշակութային

տարբերությունը արժևորելու կարողություն: Աշխատանքում ներկայացված է նաև Ջ. Շումանի երկրորդ լեզվի յուրացման վրա ազդող գործոնների տաքսոնոմիան:

Այս գլխում ատենախոսը հանգամանորեն անդրադարձել է նաև մշակութային և սոցիալական ներուժի ազդեցությանը ուսումնառության գործընթացի վրա, լսարանային միձավայրը դիտարկելով որպես սոցիալ -մշակութային միջավայր, որն ապահովում է երկու գործառույթ՝ կրթական ֆորմալ և ինֆորմալ հնարավորություններ: Նա գտնում է, որ անհրաժեշտ է մոդելավորել լեզվակիրներին բնորոշ լեզվական իրադարձությունները երկրորդ լեզվի ակադեմիական ուսուցման գործընթացում՝ բացահայտելով «հաղորդակցական դասարան» ձևավորող տարրերը:

Գլուխ երկրորդը, որը վերնագրված է «Հայերենի որպես երկրորդ կամ օտար լեզվի յուրացման միջավայրի առանձնահատկությունները», բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում քննվում և վերլուծվում են այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են օտարերկրացի ուսանողների հոգեբանական, սոցիալական, ակադեմիական հարմարումը, օտարերկրացի ուսանողների մշակութայնացումը և հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները Հայաստանում սովորող արտասահմանցի ուսանողների համար, դիտարկվում են վերջիններիս մշակութայնացման, մոտիվացիայի և մտածողության ձևավորման գործում լեզվամշակութային ազդեցությունները: Այս գլխում հեղինակը իր ուշադրությունն է սևեռում սոցիալական, հոգեբանական հարմարման ձևերին՝ օգտվելով հիմնախնդրին անդրադարձած հեղինակավոր գիտնականների, հոգեբանների աշխատություններից, որոնց հիման վրա թույլ են տալիս եզրակացնելու, որ օտարերկրյա սովորողի մշակութահարմար կրթության ապահովման գործում մեծ դեր ունի ոչ միայն ակադեմիական առաջադիմությունը, այլև սոցիալական հարմարումը, որտեղ կարող է սովորողը գիտելիքը ձեռք բերել իր ընկերների հետ համատեղ աշխատանքի, այն է՝ ակտիվ համագործակցության արդյունքում:



Գլուխ երրորդը, որի վերնագիրն է «Օտարերկրացի ուսանողների՝ ՀՀ սոցիալ-մշակութային միջավայր լեզվի միջոցով ինտեգրման բնագավառում առկա հիմնախնդիրների բացահայտումը» սկսվում է «Հիմնախնդրի վերաբերյալ հարցազրույցների արդյունքների վերլուծություն» ենթագլխով, որտեղ ներկայացված և վերլուծված են Հայաստանում օտարերկրացի ուսանողների լիարժեք մշակութայնացման համար անհրաժեշտ ինտեգրման երեք մակարդակները՝ թիրախային լեզվի՝ հայերենի իմացություն, ակադեմիական և սոցիալական հարմարում ուսումնական հաստատության միջոցով, երկրի սոցիալ-մշակութային կյանքին հարմարում: Իրականացվել են հարցազրույցներ հայաստանյան տարբեր մասնագիտական ուսումնական հաստատությունների 26 ուսանողների հետ: Վերլուծությունների արդյունքում ատենախոսին հաջողվել է դուրս բերել առկա խնդիրները, տալ դիպուկ առաջարկություններ խնդրո առարկայի վերաբերյալ /էջ 76/:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է՝ «Օտարերկրացի ուսանողների հայերենի ուսուցման արդյունավետության վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն», ներկայացված են հարցումից ստացված արդյունքների վերլուծությունները: Հարցմանը մասնակցել են 305 օտարերկրացի ուսանող: Հարցաթերթիկը համընդգրկուն է, բաղկացած հինգ բաժնից և 156 հարցից: Հարցվածները Հայաստանում տարբեր կրթական ծրագրերում ուսումնառող սովորողներն են տարբեր ազգություններից: Հարցումների վերլուծությունները թույլ են տալիս պատկերացում կազմել հիմնախնդրի կարևորության մասին, գիտակցել, որ դեռ կան շատ անելիքներ, վեր հանելով առկա խնդիրները՝ կարևորել արդյունավետ լուծման ելքեր գտնելու հարցը օտարերկրացի ուսանողների Հայաստանյան սոցիալ-մշակութային միջավայրում ընդգրկվելու և ինտեգրված տեսնելու հարցում:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է «Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով Հայաստանի սոցիալ-մշակութային ինտեգրման մոդել» նվիրված է ամբողջ ուսումնասիրության բաղադրամասերը

համակարգելու արդյունքում հայերենի ուսուցման միջոցով ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու դինամիկ մոդելի առաջարկմանը, որը կարող է կիրառական լինել, ինչպես հավաստիացնում է ատենախոսը, տարբեր մասնագիտական և մասնագիտական կողմնորոշման դասընթացներում: Մոդելը հետաքրքրական է իր բաղադրիչներով, որոնք են՝ ռազմավարական, կազմակերպական, տեխնոլոգիական, կրթական գնահատման: Այս ենթագլխում ակնհայտ երևում է ատենախոսի նոր մոտեցումը խնդրին, քանի որ իր կողմից արված ուսումնասիրությունների արդյունքում նա կարողանում է մոդելը կառուցել մի շարք խնդիրների դուրսբերման և դրանց էլքերի առաջարկման ուղիով: Այդ խնդիրների թվում նա տեսնում է կրթական ռեսուրսների սակավությունը, բուհերում հայերենի դասընթացին տրամադրված քիչ ժամաքանակը, գնահատման միասնական համակարգի ստեղծման և ներդրման անհրաժեշտությունը /տե՛ս էջ 125/:

Հետազոտություն ավարտվում է 11 կետից բաղկացած եզրակացություններից, որոնք ատենախոսության առաջադիր խնդիրներից բխող հիմնավորումներն են :

Օգտագործած գրականության ցանկում ներառված են 181 աղբյուր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով, առկա են համացանցային աղբյուրներ ևս: Հավելվածն առանձնահատուկ ուշադրության արժանի աշխատանք է, որին հղումներ կան աշխատանքի տարբեր հատվածներում:

Անահիտ Ավետիսյանի «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր» խորագրով հետազոտությունն ունի կուռ կառուցվածք, աշխատանքի գլուխների և ենթագլուխների միջև տրամաբանական հաջորդականությունն ապահովված է: Հիմնախնդրի կարևորությունը մեկնաբանված է բազմակողմանիորեն, կան անհրաժեշտ առաջարկություններ համակարգային բարելավման համար: Հիմնախնդրի մասին ատենախոսն ունի հրապարակած յոթ հոդված:

Այսուամենայնիվ, ներկայացնենք որոշ դիտարկումներ.

1. Հղումների մեջ նշված չեն օգտագործված գրականության ցանկում աղբյուրի տեղը: Լավ կլիներ նշվեր, թե օգտագործած գրականության ցանկում տվյալ աղբյուրը որերորդն է:

2. Լավ կլիներ որ առանձին ենթագլխով դիտարկվեին օտար երկրում ծնված հայերենին չտիրապետող սփյուռքահայերի և այլազգի ուսանողների հայերենի որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման գործընթացի նմանություններն ու տարբերությունները:

3. Աշխատանքը կշահեր, եթե հավելված 3, 11, 13, 14-ում ընդգրկված աղյուսակները զետեղված լինեին ատենախոսության տեքստում:

4. Առաջադիր խնդիրները չորսն են: Լավ կլիներ խնդիրներն առավել բաղդատված և կոնկրետացված լինեին:

5. Առաջադիր խնդիրներում ընդգրկված է սոցիոլոգիական հարցումների իրականացումը, սակայն լավ կլիներ մեկ խնդիր վերաբերեր կատարած ընդհանուր հետազոտական աշխատանքի վերլուծությանը, որում ներառված կլինեին ոչ միայն սոցիոլոգիական հարցումների, այլև հարցազրույցների ու դրանց հիման վրա արված դատողությունների վերլուծությունները ևս:

6. Աշխատանքում կամ լեզվառճական և տեխնիկական վրիպակներ:

Սակայն մեր նկատառումները չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը:

Անահիտ Սանդրոյի Ավետիսյանի «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր» խորագրով ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ

կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:


Պաշտոնական ընդդիմախոս՝  
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ



Լ. Խ. Հայրապետյան

դոց. Լ. Խ. Հայրապետյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի  
գիտական քարտուղար՝



Մ. Վ. Հովհաննիսյան  
բանասիր. գիտ. թեկնածու



30.11.2022